«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 1 ՈՐՈՇՈՒՄ

ք. Երևան *15 սեպտեմբերի 2023 թ.*

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2023 թ. սեպտեմբերի 11-ի ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման օրինակելի կանոնակարգը հաստատելու և 2015 թ. սեպտեմբերի 24-ին ընդունված «Երևանի պետական համալսարան ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը» ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 3-րդ և 4-րդ կետերով, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշում է.

1. ընդունել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետի կանոնակարգը՝ համաձայն Հավելվածի,

2. 2023 թ. սեպտեմբերի 15-ից ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2015 թ. հոկտեմբերի 20-ի նիստում ընդունված և ԵՊՀ գիտական խորհրդի 2015 թ. հոկտեմբերի 22-ի նիստում հաստատված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կանոնադրությունը:

3. Սույն որոշումն ու գիտական խորհրդի կազմի մասին դրույթները ուժի մեջ են մտնում ԵՊՀ գիտական խորհրդի 2023 թ. սեպտեմբերի 11-ի որոշման 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված ժամկետներում:

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. Ս. ՂԱԶԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի 2023 թ. սեպտեմբերի
15-ի թիվ 1 որոշման

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի նախագահ

Գ. Ս. Ղազինյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) իրավագիտության ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) գործունեության իրավական հիմքերը:

2. Ֆակուլտետը ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանման օրինակելի կանոնակարգի (այսուհետ՝ օրինակելի կանոնակարգ) հիման վրա մշակում և ֆակուլտետի գիտական խորհրդում ընդունում է ֆակուլտետի կանոնակարգը:

3. Սույն կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են սույն կանոնակարգի 2-րդ կետով սահմանված կարգով:

4. Ֆակուլտետի կանոնակարգի և օրինակելի կանոնակարգի դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են օրինակելի կանոնակարգի դրույթները:

5. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝
հայերեն՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետ,
ռուսերեն՝ Юридический факультет Ереванского Государственного Университета,
անգլերեն՝ Faculty of Law of the Yerevan Staty University:

6. Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1:

7. Ֆակուլտետը սույն կանոնակարգին համապատասխան օժտված է իրավունքներով և կրում է պարտականություններ:

8. Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ, սույն օրինակելի կանոնակարգով և ԵՊՀ ներքին իրավական ակտերով:

9. Ֆակուլտետն ունի իր անվանմամբ դրոշմակնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն), պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ ու անհատականացման այլ միջոցներ:

10. Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

II. ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

11. Ֆակուլտետն իրականացնում է բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն՝ մեկ կամ մի քանի մասնագիտություններով (կրթական ծրագրերով) և գիտահետազոտական ուսումնասիրություններ:

12. Կրթական, գիտական գործունեության, արտաքին և ներքին հաղորդակցության ու համագործակցության պատշաճ ապահովման նպատակով ֆակուլտետն իրականացնում է համապատասխան գործառույթներ և իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են գիտական խորհուրդը և ֆակուլտետի դեկանը:

14. Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը գիտական խորհուրդն է, որի նախագահն ի պաշտոնե ստորաբաժանման ղեկավարն է: Գիտական խորհուրդը կազմված է 32 անդամից:

15. Գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ ու ընտրովի անդամներից: Գիտական խորհրդի ի պաշտոնե ու հրավիրյալ անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի կազմի 50 տոկոսը:

16. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ֆակուլտետի դեկանը՝ որպես նախագահ, գրասենյակի ղեկավար-տեղակալը, ամբիոնների վարիչները, մեթոդական խորհրդի նախագահն ու արհբյուրոյի նախագահը:

17. Գիտական խորհրդի կազմում ֆակուլտետի դեկանի հրավերով կարող են ընդգրկվել ստորաբաժանման գործունեության կամ կրթական ծրագրերի գծով այլ մասնագետներ՝ գիտական խորհրդի կազմի մինչև 20 տոկոսի չափով:

18. Գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունը համամասնորեն առաջադրում են ամբիոնները, որոնց թիվը հաշվարկվում է ըստ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների գումարային թվաքանակի: Ամբիոնն իրավասու է ամբիոնի նիստում ընդունված որոշմամբ խորհրդում ընտրված անդամին հետ կանչել՝ նրա փոխարեն առաջարկելով այլ անդամի թեկնածություն:

Գիտական խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել հիմնական աշխատանքային պայմանագրով կամ ներքին համատեղությամբ ամբիոնում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողները:

19. Գիտական խորհրդի անդամների առնվազն 25 տոկոսը սովորողներն են, որոնց ընտրությունը կատարում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը: Խորհրդի սովորող անդամի փոփոխությունը կատարվում է ուսանողական խորհրդի կողմից:

20. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

Գիտական խորհրդի անվանական ցանկն ու դրանում կատարվող փոփոխությունները հաստատում է ռեկտորը:

Գիտական խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ ֆակուլտետի դեկանը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում նոր ձևավորվելիք գիտական խորհրդի անդամների անվանական ցանկը:

21. Գիտական խորհուրդը՝

1) ԵՊՀ գիտական խորհրդի ընդունած օրինակելի կանոնակարգի հիման վրա ընդունում է ֆակուլտետի կանոնակարգը,

2) ընդունում է որոշումներ ֆակուլտետի կրթական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ հարցերի վերաբերյալ,

3) սահմանված կարգի համաձայն՝ իրականացնում է ամբիոնի վարիչի և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների ընտրությունը,

4) լսում է ամբիոնի վարիչի տարեկան հաշվետվությունը: Ամբիոնի վարիչի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում սույն կանոնակարգով սահմանված կարգով քննարկում է ամբիոնի վարիչին անվստահություն հայտնելու հարցը,

5) առաջադրում է հոգաբարձուների խորհրդում և ԵՊՀ գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցչի թեկնածությունը,

6) քննարկում և առաջարկություն է ներկայացնում անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողի թեկնածության վերաբերյալ,

7) սահմանված կարգով հաստատման է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները,

8) լուծում է սույն կանոնակարգից և ԵՊՀ ներքին իրավական այլ ակտերից բխող, ֆակուլտետի կրթական և գիտական գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

22. Գիտական խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

1) գիտական խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա,

2) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում,

4) եթե դադարել են գիտական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները,

5) մեկ տարվա ընթացքում գիտական խորհրդի առնվազն երեք նիստից անհարգելի բացակայելու դեպքում,

6) որպես սովորող առաջադրվելու դեպքում սովորողի կարգավիճակը կորցնելու հետևանքով,

7) աշխատանքից ազատման դեպքում,

8) մահվան դեպքում:

23. Գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ:

Գիտական խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների ու սովորողների համար:

24. Գիտական խորհրդի նիստերը հրավիրում է նախագահը:

Գիտական խորհրդի նիստ հրավիրելու վերաբերյալ ծանուցումն ու օրակարգը խորհրդի անդամներին ուղարկվում է նիստը հրավիրելուց առնվազն հինգ, իսկ արտահերթ նիստի դեպքում՝ առնվազն մեկ օր առաջ:

Գիտական խորհրդի նիստի նախագահողը վարում է նիստը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձաժողովի ընտրությունը:

25. Գիտական խորհրդի քարտուղարին գիտական խորհրդի կազմից ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ նշանակում է ռեկտորը:

26. Գիտական խորհրդի նիստն իրավազոր է խորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում: Գիտական խորհրդում որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնակարգով այլ բան սահմանված չէ, կամ գիտական խորհուրդն այլ որոշում չի կայացրել:

Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է գիտական խորհրդի նիստի անցկացման նոր ժամկետը՝ նույն օրակարգով:

Գիտական խորհրդում պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնի տեղակալման, ամբիոնի վարիչի մրցութային ընտրության քվեարկությունը կատարվում է փակ, գաղտնի քվեարկությամբ:

27. Գիտական խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը, պրոռեկտորը, ԵՊՀ գիտական քարտուղարը:

28. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ամսաթիվը, նախագահը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի հակիրճ բովանդակությունը, քվեարկության արդյունքներն ու գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողն ու քարտուղարը, որոնք պատասխանատու են արձանագրության վարման համար: Նիստի օրակարգն ու ընդունված որոշումները տասն աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են ԵՊՀ կայքէջում:

29. Գիտական խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել մշտական ու ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց կարգավիճակը, կառուցվածքը, անվանական կազմը, իրավասությունն ու աշխատակարգը սահմանում է գիտական խորհուրդը: Ֆակուլտետի մշտական հանձնաժողովներից է մրցութային հանձնաժողովը՝ բաղկացած 3-5 անդամից:

30. Ֆակուլտետի ընթացիկ գործունեության կառավարումն ու համակարգումն իրականացնում է ֆակուլտետի դեկանը ԵՊՀ կանոնադրությամբ ու սույն կանոնակարգով սահմանված իրավասության շրջանակում:

31. Ֆակուլտետի դեկանը՝

1) ղեկավարում է ֆակուլտետի ընդհանուր գործունեությունը,

2) ապահովում է ԵՊՀ կառավարման մարմինների և գիտական խորհրդի որոշումների կատարումը,

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում գրասենյակի ղեկավար-տեղակալի թեկնածությունը,

4) համակարգում է ֆակուլտետի տարեկան գործողությունների մշակման ու իրականացման գործընթացը, տարեկան հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ գիտական խորհրդին,

5) սահմանված կարգով ռեկտորին առաջարկություն է ներկայացնում՝ ուսանողներին հեռացնելու, նրանց նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, նրանց ուսանողական իրավունքները վերականգնելու մասին,

6) սահմանված կարգով ռեկտորին առաջարկություն է ներկայացնում՝ աշխատողների նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանք կիրառելու մասին,

7) արձակում է հրաման ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու մասին,

8) իրականացնում է ԵՊՀ կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և ԵՊՀ ներքին իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

32. Ֆակուլտետի դեկանի ընդունած հրամանները, տրված աշխատանքային հանձնարարությունները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների ու սովորողների համար:

33. Ֆակուլտետի կրթական, գիտական հարցերը քննարկվում են ֆակուլտետի մեթոդական խորհրդում, որի ստեղծման ու գործունության կարգը սահմանվում է մեթոդական խորհրդի կանոնակարգով:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

34. Ամբիոնը ֆակուլտետի կրթագիտական գործընթացը կազմակերպող կառուցվածքային միավոր է:

35. Ամբիոնը կազմակերպում է ուսումնական գործընթացը, իրականացնում է կրթական ու գիտական հետազոտություններ:

36. Ամբիոնն գործում է ԵՊՀ կանոնադրությանը, ԵՊՀ իրավական ակտերին և սույն կանոնակարգին համապատասխան:

37. Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է ֆակուլտետի գիտական խորհրդում 5 տարի ժամկետով, «ԵՊՀ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված կարգով՝ բաց մրցութային ընտրությամբ՝ փակ, գաղտնի քվեարկությամբ:

Մրցութային ընտրության արդյունքը ԵՊՀ գիտական խորհրդում բաց քվեարկությամբ հաստատվելու դեպքում ռեկտորն ամբիոնի վարիչի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:

Ամբիոնի վարիչի գործունեությունը գիտամանկավարժական աշխատանք է:

Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ամբիոնի վարիչի պաշտոնում:

38. Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչը սահմանված կարգով տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետի գիտական խորհրդում: Ամբիոնի աշխատանքների մասին ամբիոնի վարիչի հաշվետվության ժամկետն ու ձևը սահմանում է գիտական խորհուրդը:

39. Գիտական խորհրդում ամբիոնի վարիչի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում հնգօրյա ժամկետում հրավիրվում է գիտական խորհրդի արտահերթ նիստ, և քննարկվում է ամբիոնի վարիչին անվստահություն հայտնելու հարցը:

Փակ, գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը ներկայացվում է ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը:

ԵՊՀ գիտական խորհրդում բաց քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը հաստատվելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

ԵՊՀ գիտական խորհրդում ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը չհաստատվելու դեպքում հնգօրյա ժամկետում հրավիրվում է ֆակուլտետի գիտական խորհրդի նոր նիստ: Գիտական խորհրդի նիստի մասնակիցների ձայների երկու երրորդով ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը վերահաստատելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

40. Ամբիոնը սահմանված կարգով մասնակցում է պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան ուսումնական բեռնվածության նախագծի մշակմանը:

41. Ամբիոնի աշխատանքներն իրականացվում են աշխատանքային ծրագրերին (պլաններին) համապատասխան:

42. Ամբիոնի կրթական և գիտական հարցերը քննարկվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի նիստերում:

Ամբիոնի նիստերին քվեարկող ձայնի իրավունքով մասնակցում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական աշխատողները:

Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դեկանը կամ տեղակալը, ամբիոնի համատեղող դասախոսներն ու ասպիրանտները:

Ամբիոնի նիստերը հրավիրվում են տարեկան առնվազն ութ անգամ:

Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են ամբիոնի վարիչն ու այն արձանագրող աշխատողը:

43. Ֆակուլտետի կազմում գործում են ենթաստորաբաժանումներ՝ գիտահետազոտական և այլ կենտրոններ, գիտակրթական ու այլ բաժիններ, որոնք ստեղծվում և գործում են ԵՊՀ կանոնադրությանն ու սույն կանոնակարգին համապատասխան: Նշված ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ՝ ռեկտորի կողմից:

44. Ֆակուլտետի կազմում գործում է գրասենյակ, որը կազմակերպում է ստորաբաժանման ընթացիկ գործունեությունը, գրագրության վարումը, ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, շրջանավարտների ու ոլորտային գործընկերների հետ տարվող աշխատանքները, կատարում է ուսումնական ու գիտահետազոտական գործընթացին օժանդակող այլ գործառույթներ:

45. Ֆակուլտետի կազմում ներառված են հետևյալ ամբիոնները՝

1. Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնը,
2. Սահմանադրական իրավունքի ամբիոնը,
3. Քաղաքացիական իրավունքի ամբիոնը,
4. Քրեական իրավունքի ամբիոնը,
5. Քաղաքացիական դատավարության ամբիոնը,
6. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնը (ներառյալ Կրիմինալիստիկայի լաբորատորիան),
7. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնը,

հետևյալ կենտրոններն ու կառույցները՝

8. Էկոլոգիական իրավունքի գիտահետազոտական կենտրոնը,
9. Ուսանողական իրավաբանական խորհրդատվության (Իրավաբանական կլինիկա) կենտրոնը,
10. Համակարգչային-կենտրոն գրադարանը,
11. Փոքր տպարանը: